ԿՈԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

2023
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՈԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

«ԿԱՆԱՆՑ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 3

Ա. ԿՌԿ-ի առաքելությունն ու տեսլականը 3

Բ. Առանձնահատկությունները 3

2. ԾՐԱԳՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄՆԵՐ 5

2.1 Ֆեմինիստական ապահով տարածք և կանանց ու աղջիկների զորեղացում 7

2.2 Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք 11

2.3 Ֆեմինիստական ադվոկացիա 13

2.4 Հաղորդակցություն և մեդիա 19

2.5 2023 թվականին իրականացված այլ ծրագրեր 22

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Ա. ԿՌԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԿՌԿ) ֆեմինիստական իրավապաշտպան կազմակերպություն է: ԿՌԿ-ի տեսլականն է հայաստանյան հասարակությունում կանանց հավասար և ինքնորոշ կարգավիճակի հաստատումը և հայրիշխանական հասարակարգի կողմից կնոջ նկատմամբ կիրառվող բռնաճնշումների և սահմանափակումների վերացումը: ԿՌԿ-ն իր գործունեությամբ ձգտում է հասարակության մեջ վարքային և նորմատիվային փոփոխության՝ ներազդելով պետական քաղաքականության, սոցիալ-մշակութային և օրենսդրական դաշտերի վրա: ԿՌԿ-ն հիմնադրվել է 2003թ-ին և գործում է թեմատիկ 3 հիմնական ուղղություններով՝

- **ֆեմինիստական ապահով տարածք եւ կանանց ու աղջիկների զորեղացում**
- **սեռական եւ վերարտադրողական առողջություն եւ իրավունք**
- **կանանց իրավունքների ջատագովություն**

ԿՌԿ թեմատիկ ուղղությունների մասին պատմող կարճ հոլովակը դիտել կարող եք այստեղ:

2023թ. լրացավ Կանանց ռեսուրսային կենտրոնի հիմնադրման 20-ամյակը: Այս 20 տարիները լի են եղել բազմաթիվ դժվարություններով ու ձեռքբերումներով, ուստի մեզ համար կարևոր էր անգամ այս դժվարին ու ճգնաժամային շրջանում տոնել այն փաստը, որ ԿՌԿ-ն շարունակում է իր գործունեությունը և կանանց զորեղացելու իր առաքելությունը:

Բ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՌԿ-ն իր հիմնադրման առաջին իսկ օրվանից առանձնացել է ֆեմինիստական մոտեցմամբ, որը կանանց առաջարկում է առանց խտրականության, համագործակցությամբ, հավասար հնարավորություններով ու փոխօգնությամբ լի ֆեմինիստական ապահով տարածք, որտեղ յուրաքանչյուր կին կարող է նախաձեռնել ու իրականացնել սեփական գաղափարները, եթե վերջիններս դեմ չեն ֆեմինիստական գաղափարախոսությանն ու արժեքներին:

Առաքելությունը	Տեսլականը	Նպատակը
1.Կանանց և աղջիկների տարբեր խբերի զորեղացումն ու աջակցումը: 2.Կանանց նկատմամբ խտրականության և բռնության մշակութային և համակարգային դրսևորումների վերհանումն ու նվազեցումը: 3.Ֆեմինիստական գաղափարախոսության տարածումն ու հայրիշխանական համակարգի կողմից ստեղծված անհավասարությունների դեմ կանանց միասնական պայքարի սատարումը:	1.Հայաստանյան հասարակությունում կանանց հավասար և ինքնորոշ կարգավիճակի հաստատումը: 2.Հայրիշխանական հասարակարգի կողմից կնոջ նկատմամբ կիրառվող բռնաճնշումների և սահմանափակումների վերացումը:	1.ԿՌԿ-ն իր գործունեությամբ ձգտում է հասարակության մեջ վարքային և նորմատիվային փոփոխության՝ ներազդելով պետական քաղաքականության, սոցիալ-մշակութային և օրենսդրական դաշտերի վրա:

Նշանակալից դիտարկումներ

2023 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին ԿՌԿ այցելել է 128 մարդ, որից 23-ը արական, իսկ 105-ը իգական սեռի ներկայացուցիչներ են: Ստորև բերված գծապատկերը արտացոլում է ԿՌԿ-ի այցելուների հաճախումների վիճակագրությունը՝ բաշխված ըստ ամիսների և սեռերի:



Գծապատկեր 1
Այցելուների բաշխումն ըստ ամսիների և սեռերի





Գծապատկեր 2
ԿՌԿ-ի նոր և ակտիվ անդամների հաճախումների բաշխումն ըստ ամիսների

ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ռազմական ագրեսիայից հետո շուրջ 100.000 արցախցի բռնի տեղահանվել է իր ծննդավայրից՝ ապաստանելով Հայաստանում: Արցախցիների ժամանումից անմիջապես հետո մեր կազմակերպությունն առաջնագծում էր: Մենք իրականացրել ենք գենդերային կարիքների գնահատում, ինչպես նաև մարդասիրական օգնություն ենք տրամադրել բռնի տեղահանված շուրջ 250 կանանց և աղջիկների: Աջակցել ենք Արցախի քաղաքացիներին, ինչպես նաև Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերում և խոցելի այլ համայնքներում գտնվող 4 կացարաններում ապրող կանանց:

Նոյեմբերից սկսած ԿՌԿ-ն նախաձեռնել է 18-60 տարեկան տեղահանված կանանց և աղջիկների անվճար բժշկական ծառայությունների տրամադրումը: Այս ծառայությունները ներառում են.

- սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ներառյալ ՄԻԱՎ-ի) թեստավորում և բուժում.
- խորհրդատվություն հղիության ընդհատման վերաբերյալ.
- սեռական բռնության դեպքում անվճար բժշկական զննում:

Բացի այդ, ԿՌԿ-ն վերապատրաստում է անցկացրել տեղահանված հղիների համար և նրանց տրամադրել ծննդաբերական փաթեթներ:

Սեպտեմբերի 22-ին ԿՌԿ-ն իր ապահով տարածքում մեկնարկեց առաջին հավաքը Արցախի իրադարձություններից ուղղակի և անուղղակի տուժած կանանց հետ: Նպատակն անվտանգ տարածքի ստեղծումն էր, որպեսզի մարդիկ կապ հաստատեն համախոհ անհատների հետ, արտահայտեն իրենց մտահոգությունները, զգացմունքները և մտքերը Արցախի շրջափակման, պատերազմի և տեղահանության սթրեսային ժամանակներին դիմակայելու վերաբերյալ: Այդ ժամանակից ի վեր մենք ամեն հինգշաբթի հավաքներ ենք կազմակերպում՝ հարթակ տրամադրելով քննարկումների և և ստեղծարարության համար, այդ թվում՝ կավագործությամբ, նկարչությամբ և մակրամեով զբաղվելու՝ ընդգծելով ստեղծագործական արտահայտման թերապևտիկ կողմը:

ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՌԵԺԻ ԳԾԵՐ

2.1 ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՈՐԵՂԱՑՈՒՄ

Ֆեմինիստական ակտիվիզմը ԿՈԿ գործունեության հիմնական ուղղություններից է: Ծավալելով ֆեմինիստ ակտիվիստական գործունեություն՝ կազմակերպությունը փորձում է նպաստել ֆեմինիստական շարժման ծավալմանը և հայրիշխանական համակարգի տապալմանը: ԿՈԿ ֆեմինիստական տարածքը գործում է 3 հիմնական ուղղություններով.

- կանանց և աղջիկների կարողությունների զարգացում.
- ֆեմինիստական ակտիվիզմ.
- կանանց բարօրություն:

ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔ

Հիմնադրման առաջին իսկ օրվանից կանանց ռեսուրսային կենտրոնը (ԿՈԿ) կանանց տարբեր խմբերի համար ստեղծել է ապահով և հյուրընկալ միջավայր: Այս ապահով տարածքում անհատները հնարավորություն ունեն իրենց փորձով կիսվելու, քննարկումների մեջ ներգրավվելու և արտահայտվելու՝ առանց առչնվելու որևէ խտրականության ու քննադատության: Աշխատում ենք երկուշաբթիից շաբաթ՝ 12:00-ից մինչև 18:00-ը՝ բացառությամբ չորեքշաբթի օրերի, և մեր ապահով տարածքը բաց է աշխատելու, սովորելու, մեր գրադարանից օգտվելու և աշխատակիցների հետ շփվելու համար: Այստեղ կազմակերպում ենք բազմաթիվ քննարկումներ, տեղեկատվական հանդիպումներ, կինոդիտումներ, գրքերի ակումբներ, տարբեր միջոցառումներ, որոնք ուղղված են մասնակիցների բարօրության և հոգեկան առողջության բարելավմանը: Այս տարի մեր ապահով տարածքում ունեցել ենք 348 այցելություն:

1. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԿԱՆԱՆՑ ՈՐԵՂԱՑՄԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

Ֆիլմերի ցուցադրություններ և այլ իրադարձություններ

Տարվա ընթացքում Ֆեմինիստական Ապահով Տարածքը կազմակերպել է 3 ֆիլմերի ցուցադրություն՝ «Radioactive», «Everything everywhere all at once» և «One good song can do more than 5000 protests»: Բացի այդ՝ կազմակերպությունը հյուրընկալել է «Խոսենք հարաբերությունների մասին» խորագրով հատուկ միջոցառումը, որը խթանում է առողջ ու անառողջ հարաբերությունների նրբությունների վերաբերյալ բաց քննարկումը և միջանձնային այլ պրոբլեմների լուծումը, որոնց կարող են առնչվել անհատները:

Արվեստի գործերի ցուցահանդեսներ և թեմատիկ սեմինարներ

Շարունակելով ապացուցել իր սերն ու նվիրվածությունն արվեստի հանդեպ՝ մարտ ամսին Ֆեմինիստական Ապահով տարածքը-ը հյուրընկալել է «Տեսանելի անուն» ցուցահանդեսը, որում ներկայացված էին երեք տաղանդավոր կին արվեստագետների՝ Անի Թադևոսյանի, Հուրի Մարգարյանի և Ամասիա Նիզիբլյանի բազմազան աշխատանքները:

Զորեղացման ճամբար

Օգոստոսին Ֆեմինիստական Ապահով Տարածքը Ծաղկաձորում կազմակերպել է աղջիկների զորեղացման իր ամենամյա ճամբարը՝ ներգրավելով 18-25 տարեկան 21 երիտասարդ աղջիկների: Ճամբարը ծառայել է որպես փոխակերպող փորձ՝ խթանելով զորեղացումն ու անհատական զարգացումը:

ԿԽԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

Շվեդիա
Sverige

#արիֆեմտարածք

2շաբաթի
12:00-18:00

3շաբաթի
12:00-18:00

- ապահով տարածք
- ֆեմ.գրադարան
- անվճար ինտերնետ
- պարբ. միջոցառումներ

5շաբաթի
12:00-18:00

ուրբաթ
12:00-18:00

Սարյան 24/5

2. ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԱԿՏԻՎԻԶՄ

Կանանց պատմության միամսյակի քարոզարշավ

Մարտին Ֆեմինիստական Ապահով Տարածքը ղեկավարել է կանանց պատմության միամսյակի քարոզարշավը՝ օգտագործելով ստեղծագործական QR մոտեցումը հանրության հետ: Կամավորները նախատոնական զեղչերով գովազդային պաստառներ են պատրաստել, որոնցում զետեղված է եղել տեղեկություն գենդերային բռնության (ԳԲ), ընտանեկան բռնության (ԸԲ) և կանանց իրավունքների մասին: Մարտի 4-ին ԿՈԿ-ի աշխատակիցները և կամավորները այցելել են Վանաձոր, իսկ մարտի 18-ին՝ Գյումրի՝ համագործակցելու ֆեմինիստ և քուիր համայնքի երիտասարդների հետ և խթանելու վերը նշված ակցիայի տարածումը նաև մարզերում: Կանանց Զարգացման Հիմնադրամի հետ համագործակցության շնորհիվ մարտի 21-ին հանրությանը ներկայացվել է Երևանի ֆեմինիստական քարտեզը: Միամսյակը եզրափակվել է մարտի 28-ին երիտասարդ գիտնականներ Շողիկ Ղազարյանի և Հասմիկ Թորոսյանի մասնակցությամբ հավաքով, ինչից ոգեշնչվելով 20 երիտասարդ աղջիկ որոշել են հետագայում մասնագիտական առնչություն ունենալ STEM ոլորտին:

Կամավորների ներգրավում

Այս տարի ԿՈԿ-ն ունեցել է 15 ակտիվ կամավորներ, ինչպես նաև ձեռք է բերել 12 նոր և ստացել դիմում չորս ապագա կամավորներից՝ ևս մեկ անգամ ի ցույց դնելով մեր առաքելությանը և գաղափարախոսությանը նվիրված անհատների աճող համայնքը:

Կանանց իրավունքների դասընթաց

2023 թվականին կազմակերպվել է երկու խումբ«Կանանց իրավունքների դասընթաց», որոնք տեղի են ունեցել ապրիլին և սեպտեմբերին: Անդրադարձ է եղել այնպիսի թեմաների, ինչպիսիք են մարդու իրավունքները, գենդերը, գենդերային բռնությունը, ֆեմինիզմը, սեռական և վերարտադրողական առողջությունը և իրավունքները, կանայք, խաղաղությունն ու անվտանգությունը: Ապրիլյան նստաշրջանից հետո կյանքի կոչվեցին մի խումբ նախաձեռնություններ: Այս նախաձեռնությունները կենտրոնացած էին այնպիսի կարևոր խնդիրների վրա, ինչպիսիք են ֆեմինիզմը, մարդու իրավունքները, էկոակտիվիզմը, դպրոցներում գենդերային նորմերի վիճարկումը և գենդերային բռնության դեմ պայքարը: Սեպտեմբերյան դասընթացին գենդերային հավասարության վերաբերյալ փորձառական ուսուցման նպատակով, «Քայլ դեպի հավասար իրավունքներ» նախաձեռնությունը ակտիվորեն ներգրավեց Բավրա գյուղի 20 երեխաների և 20 ծնողների՝ օգտագործելով ֆորում թատրոն մեթոդը (forum theatre) և արշավային էքսկուրսիան: Մյուս նախաձեռնությունները ուղղված էին նորարարական գործիքների միջոցով հասարակական տարբեր շերտերը կրթելուն ու ուղղորդելուն.

- ծնողների՝ սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների մասին երեխաների հետ զրույցների կարգավորմանը.
- իրավախախտ կանանց համար իրավունքների պաշտպանությանը.
- երիտասարդ ուսանողներին գենդերային կարծրատիպերից զուրկ մասնագիտությունների ընտրությանը:

3. ԿԱՆԱՆՑ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Հոգեբանական աջակցություն

Հետպատերազմյան իրավիճակի հետ կապված մարտահրավերների ֆոնին ակտիվացել են կանանց իրավունքների ոտնահարման դեպքերը, գենդերային հիմքով բռնությունը, ընտանեկան բռնությունը և այլ վնասակար պրակտիկաներ: Կանանց վրա այս մարտահրավերների խտրական ազդեցությունը մեղմելու նպատակով՝ Կանանց ռեսուրսային կենտրոնը (ԿՈԿ) հոգեբանական աջակցություն տրամադրող խմբային հանդիպումներ է կազմակերպել: Ամբողջ տարվա ընթացքում

ԿՌԿ-ն իրականացրել է վեց հոգեբանական խմբային հանդիպումներ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է եղել 6-ից 8 հանդիպումներից: Արձագանք ենք ստացել 212 կանանցից, որոնցից 44-ը ակտիվորեն մասնակցել են դասընթացներին: Բացի այդ՝ տրամադրվել է 89 ժամ անհատական հոգեբանական խորհրդատվություն 10 կանանց՝ առաջ մղելով հուզական բարեկեցությունը սնուցելու մեր հանձնառությունը:

Իրավաբանական խորհրդատվություն

Իրավաբանական աջակցության ծառայություններ են մատուցվել 217 զանգահարողների և 21 այցելուների՝ տրամադրելով իրավական խնդիրներ լուծելու և կանանց գիտելիքներով և այլ ռեսուրսներով զինելու կարևոր խորհրդատվություն:

Յոգայի և բարեկեցության դասընթացներ

Փետրվարից դեկտեմբեր ժամանակահատվածում յոգայի դասընթացներ են անցկացվել՝ նպաստելով ֆիզիկական և մտավոր բարեկեցությանը:

2.2 ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

«Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունք» (ՍՎԱԻ) ծրագիրը գործում է կազմակերպության ներսում 2008թ-ից և կազմակերպության կարևոր առաջնահերթություններից մեկն է: Այս ծրագիրը առանցքային դիրք է զբաղեցնում կազմակերպության առաջնահերթությունների շարքում՝ հասարակության ներսում կարևորագույն հարցերի շուրջ քննարկումների համար խթան հանդիսանալով:

ՍՎԱԻ ծրագիրը անդրադառնում է կանանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների հետ կապված մտահոգություններին՝ լույս սփռելով այն խոչընդոտների վրա, որոնք խանգարում են կանանց ինքնավարությանը իրենց մարմինների վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Այն դիմակայում է սեքսուալության՝ որպես խարանված և փակ թեմայի գերակշռող ընկալմանը՝ նպատակ ունենալով վերացնելու բաց երկխոսությունը սահմանափակող տաբուները:

ՍՎԱԻ-ի նպատակը տարբեր խմբի կանանց սեռական և վերարտադրողական իրավունքների պաշտպանությունն է իրազեկվածության բարձրացման ու ոլորտում առկա հիմնախնդիրների բարձրաձայնման և լուծման մեխանիզմներ մշակելու շնորհիվ:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1.ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԳԻՆԵԿՈԼՈԳՆԵՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Կանանց ռեսուրսային կենտրոնը (ԿՌԿ) ակտիվորեն ներգրավված է կարողությունների զարգացման և իրազեկության բարձրացման գործում մասնավորապես մանկաբարձ-գինեկոլոգների և ընտանեկան բժիշկների համար նախատեսված սեմինարների միջոցով: «Վերարտադրողական իրավունքների շահերի պաշտպանության» ցանցը (այսուհետ՝ Ցանց) մշակել է վերապատրաստման մոդուլ, որը բժշկական ծառայությունների մատուցման իրավունքահեն և ոչ խտրական մոտեցում է ներկայացնում: Այս նախաձեռնությունը իրականություն է դարձել 2017թ-ին ՍՎԱԻ ծրագրի շրջանակներում: Մանկաբարձ-գինեկոլոգների և ընտանեկան բժիշկների համար նախատեսված ձեռնարկը հավաստագրվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2019թ-ին, իսկ 2021թ-ին հավաստագրումը վերահաստատվել է և ուժի մեջ է ևս 2 տարի: Հարկ է նշել, որ դասընթացն ավարտելուց հետո մասնակիցները ստանում են Շարունակական Մասնագիտական Զարգացում/ՇՄԶ/ տեսական կրեդիտներ:

2023թ-ին ԿՌԿ-ն վերապատրաստման երկօրյա դասընթացներ է իրականացրել՝ վերապատրաստելով 150 մանկաբարձ-գինեկոլոգների և ընտանեկան բժիշկների Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերից:

2. ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Կանանց ռեսուրսային կենտրոնը (ԿՌԿ) կազմակերպել է ֆեմինիստական մոտեցմամբ սեմինար հղի կանանց զորեղացման համար: Սեմինարին ներկա 35 մասնակիցները՝ բաժանված երկու խմբերի, ակտիվորեն մասնակցել են վեց հանդիպումների, որոնք վարում էր որակավորված մանկաբարձուհի Ֆինլանդիայից: Սեմինարն ընդգրկում էր հղիության և ծննդաբերության վերաբերյալ տարբեր թեմաներ՝ սկսած ֆիզիկական բարեկեցությունից և ցավը մեղմացնող վարժություններից, մինչև ծննդաբերության և հետծննդյան խնամքի նախապատրաստական աշխատանքներ:

3. «ԻՄ ՄԱՐՄԻՆ՝ ԻՄ ԻՐԱՎՈՒՆՔ» ՍԵՄԻՆԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

«Իմ մարմին՝ իմ իրավունք» սեռական առողջության սեմինարը անցկացվել է 2023 թվականի հունիս-հուլիս և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին երիտասարդ կանանց երկու խմբերի համար, որոնց մասնակցել են 35 երիտասարդ կանայք: Սեմինարները ներառում էին ութ հանդիպումներ, որոնք ընդգրկում էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սեռական և վերարտադրողական անատոմիան և ֆիզիոլոգիան, անձնական հիգիենան, դաշտանային ցիկլը, առողջ սեռական հարաբերությունները, սեռավարակները, հակաբեղմնավորման մեթոդները և համապատասխան այլ թեմաներ:

Բոլոր հանդիպումների ընթացքում մասնակիցները արժևորել են ոչ միայն սեռականության վերաբերյալ ճշգրիտ տեղեկության ձեռքբերումը, այլև ինքնաընկալման իրենց տեսակետների բարեփոխությունը, ինչը հանգեցնում է ինքնավստահության բարձրացմանը:

2.3 ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԱԴՎՈԿԱՑԻԱ

Ադվոկացիան փուլային գործընթաց է՝ ուղղված որոշումներ կայացնողների, մասնավորապես՝ պետական մարմինների կողմից մշակվող և կիրառվող քաղաքականության և օրենսդրության փոփոխությանն ու բարելավմանը: Մեր ադվոկացիոն աշխատանքը հիմնվում է ֆեմինիստական արժեքների ու մոտեցումների վրա, որոնց համար հիմք են ծառայում կանանց տարբեր խմբերի հիմնախնդիրները: Անձնական մակարդակում հանդիպող խնդիրները հավաքագրելուց հետո ԿՌԿ ադվոկացիոն թիմը փորձում է քաղաքականացնել այդ հիմնախնդիրները՝ բարձրաձայնելով դրանք պետական մարմինների շրջանում և առաջարկելով դրանց լուծումներ օրենսդրական կամ պետական քաղաքականության մակարդակում: Ադվոկացիոն աշխատանքն իրականացվում է տեղական և միջազգային մակարդակներում՝ կանանց անձնական խնդիրներին տալով համապատասխան լուծումներ:

2023թ. ադվոկացիոն թիմն աշխատել է մի քանի ուղղություններով, որոնք բխում են հետպատերազմական և մասնավորապես 2023թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի բնակչության բռնի տեղահանման արդյունքում կանանց տարբեր խմբերի կարիքներից:

ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԱԴՎՈԿԱՑԻԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Տեղական մակարդակում մեր առաջնային նպատակն էր ազդել պետական քաղաքականության և օրենսդրական գործընթացների վրա՝ ցանկանալով կանանց համար դրանք դարձնել ավելի գենդերազգայուն և ներառական:

1.ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Հետպատերազմական իրադարձություններն առավել շատ են ազդում կանանց սեռական և վերարտադրողական իրավունքների իրացման վրա: Մասնավորապես հետպատերազմական շրջանում պետությունները ակտիվ քարոզչություն են տանում ծնելիության խթանման ուղղությամբ: Այս տեսանկյունից Հայաստանը ևս բացառություն չէ: Մեր երկրում ծնելիության խթանման ծրագրերը թիրախավորում են կանանց՝ առանց տրամադրելու պատշաճ երաշխիքներ՝ ուղղված երեխաների խնամքի հարցերին: Մտահոգիչ է նաև առողջության՝ 2024թ. ներդրվող համապարփակ ապահովագրությունը, որը կանանց տարբեր խմբերի համար չունի սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների բավարար ծածկույթ: Այս համատեքստում շարունակում է խնդրահարույց լինել կանանց՝ սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունները գաղտնի պայմաններում և մեկուսի ստանալու իրավունքի պաշտպանությունը, որը շատ հաճախ անտեսվում է բժշկական ծառայություններ մատուցողների կողմից:
Հայաստանում համապարփակ և իրավունքահեն սեռական կրթության բացակայությունը մեկ այլ մարտահրավեր է, որի ներդրման շուրջ մենք շարունակում ենք մեր աշխատանքները:

Սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքի ոլորտում նշված մարտահրավերները հասցեագրելու նպատակով մենք իրականացրել ենք հետևյալ գործողությունները.

- 2017թ. ԿՌԿ ջանքերով ստեղծված «Վերարտադրողական իրավունքների շահերի պաշտպանության ցանցի» անդամների հետ ունեցել ենք մի շարք հանդիպումներ ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների և Ազգային ժողովի պատգամավորների հետ, քննարկել ինչպես հաճախորդների սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունները գաղտնի պայմաններում և մեկուսի ստանալու իրավունքի պաշտպանության հնարավորությունները՝ բժշկական հաստատությունների լիցենզավորման կարգի շրջանակներում ամրագրման հնարավորությամբ, այնպես էլ առողջության համապարփակ ապահովագրության ներդրման խնդիրները և կանանց տարբեր խմբերին հասանելի և որակյալ սեռական և վերարտադրողական ծառայությունների ներառումը: Ցանցի առաջարկները իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով նաև ներկայացվել են ՀՀ առողջապահության նախարարությանը:

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցության արդյունքում վերանայել ենք «Առողջ ապրելակերպ» դասընթացի ուսուցչի ձեռնարկները 5-11 դասարանների համար և ներկայացրել առաջարկներ սեռական ու վերարտադրողական առողջության և իրավունքի թեմաների շուրջ: Առաջարկների տրամաբանությունը բխել է համապարփակ և իրավունքահեն մոտեցման սկզբունքներից:

- Մեր ադվոկացիոն թիմի ջանքերով մշակվել է փաստաթուղթ Հայաստանում ծնելիության քաղաքականության վերաբերյալ: Փաստաթղթում անդրադարձ է կատարվում իրականացվող պետական ծրագրերին և վեր է լուծվում դրանց ազդեցությունը կանանց իրավունքների վրա: Փաստաթուղթը հասանելի է նշված հղումով:

- Խնամքի հաստատությունների դիտորդական խմբի անդամների հետ ունեցել ենք պարբերաբար հանդիպումներ և քննարկել խնամքի կենտրոններում վերարտադրողական առողջության միասնական չափորոշիչների վերաբերյալ ձեռնարկ մշակելու հնարավորությունը, որը կօգնի դիտորդական խմբի անդամներին առավել համապարփակ ձևով մշտադիտարկելու այդ հաստատությունները: Ձեռնարկը մշակվել է մեր ադվոկացիոն թիմի կողմից և ներկայացվել է քննարկման դիտորդական խմբի անդամներին:

Այս նախաձեռնությունները համապարփակ ցույց են տալիս ԿՌԿ-ի՝ սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների խնդիրների լուծման, քաղաքականության մշակման վրա ազդելու, կրթության բարելավման և խնամքի հաստատություններում վերարտադրողական առողջության չափանիշների խթանման հանձնառությունը:

2. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2023թ. ընթացքում ԿՌԿ ադվոկացիոն թիմը շարունակեց աշխատավայրում սեռական ոտնձգություններն արգելող օրենսդրության ընդունմանն ուղղված գործողությունները: Մարտ ամսին հրապարակեցինք «Աշխատավայրում սեռական ոտնձգության հիմնախնդիրը Հայաստանում» հետազոտությունը, որին ներկա էին նաև ՀՀ ԱԺ պատգամավորներ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարը: Որոշում կայացնողների հետ պարբերաբար հանդիպումներն ու քննարկումները շարունակվեցին մինչև մայիս ամիսը, երբ ԱԺ-ն ընդունեց ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը՝ ներառյալ աշխատավայրում սեռական ոտնձգությունների արգելքը: Օրենքի ընդունումից հետո ԿՌԿ-ն շարունակում է օրենքի մասին իրազեկման աշխատանքները և արդյունավետ կիրառմանն ուղղված քննարկումները:

ԿՌԿ-ն շարունակում է իր համագործակցությունը Սոլիդարիթի Սենթր կազմակերպության հետ: 2023թ-ից աշխատում ենք աշխատավայրում գենդերային խտրականության դրսևորումների բացահայտմանն ուղղված հետազոտության շուրջ, որը կհրապարակվի 2024թ-ին:

ԿԱՆԱՆՑ
ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ
WRC ARMENIA

ԿԱՆԱՆՑ
ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ
WRC ARMENIA

WRC ARMENIA
Աջակցություն կանանց
քաղաքացիական
հասարակությանը
for resilient
civil society
Sida

3. ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և մասնավորապես Ադրբեջանի կողմից 2023թ. սեպտեմբերին արցախցիների բռնի տեղահանումը, որը հաջորդեց շուրջ 10-ամսյա շրջափակմանը, իր ազդեցությունն ունեցավ կանանց իրավունքների վրա: Պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում հատկապես կարևոր են կանանց (այդ թվում՝ տեղահանված կամ պատերազմական գործողություններից տուժած կանանց) առանձնահատուկ կարիքներին արձագանքը և խաղաղության գործընթացում կանանց դերի բարձրացմանն ուղղված ադվոկացիոն աշխատանքները: Մյուս կողմից՝ նման ճգնաժամերին հաջորդում է պետությունների միլիտարիստական հռետորաբանության ակտիվացումը, որը իր ազդեցությունն է ունենում հասարակությունում կանանց դերի ու կարգավիճակի կայունացմանը, երբեմն նաև հետընթացի արձանագրմանը: Այս շրջանակներում ԿՌԿ ադվոկացիոն թիմն աշխատեց հետևյալ ուղղություններով.

- Մարտի 7-ին՝ Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ, ԿՌԿ-ն կազմակերպեց «Կանանց իրավունքները բազմակի ճգնաժամերի համատեքստում. մարտահրավերներ և հնարավորություններ» կլոր սեղան-քննարկումը: Հանդիպման նպատակն էր ստեղծել երկխոսության հարթակ պետության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև, որտեղ կքննարկեինք հետպատերազմական շրջանում կանանց իրավունքների շրջանում առկա մարտահրավերները, ինչպես նաև համատեղ անելիքները անվտանգային գլոբալ հարցերի տեսանկյունից:

- 2023թ. հրապարակվեց ՄԱԿ-ի Ախ 1325 բանաձևի գործողությունների ազգային պլանի ֆեմինիստական վերլուծությունը:

- 2023թ. իրականացրինք 2 խորհրդատվություն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ «Հետպատերազմական շրջանում կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի շուրջ: Հանդիպումների մասին առավել մանրամասն նշված հղումով՝ https://shorturl.at/ntGY3 և https://shorturl.at/dtNY9:

- Մայիսի 3-ին և 16-ին կազմակերպեցինք հրատապ խորհրդակցություններ բանակում կանանց կամավոր զորակոչին վերաբերող օրենսդրական նախագծի վերաբերյալ: Տարբեր քաղհասարակության կազմակերպությունների մեր գործընկերների հետ որոշեցինք բարձրաձայնել մեր մտահոգությունները Կառավարության և Ազգային ժողովի կողմից այս վտանգավոր օրենսդրական կարգավորման վերաբերյալ: Կանանց իրավունքների վրա այս փոփոխության բացասական հետևանքների վերաբերյալ հայտարարություն պատրաստեցինք և տարածեցինք հաղորդակցության տարբեր ուղիներով: Չնայած մեր համատեղ ջանքերին՝ հունիսի 26-ին Ազգային ժողովն ընդունեց այս նախագիծը : Մենք նախատեսում ենք մշտադիտարկել օրենքի կիրարկումը, որն ուժի մեջ կմտնի 2024թ. փետրվարից:

- 2022թ. դեկտեմբերից Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակման ազդեցության, հումանիտար աղետի և կանանց իրավունքների վրա ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի վրա հարձակման և տեղի բնակչության բռնի տեղահանման վերաբերյալ մեր թիմը պատրաստել է իրազեկող 4 հաշվետվություններ մեր միջազգային գործընկերների համար: Հոկտեմբերին մենք իրականացրինք նաև տեղահանված կանանց կարիքների գնահատում:

- Նոյեմբերի 6-ին Հայաստանի և Ադրբեջանի սահմանը մշտադիտարկող ԵՄ առաքելության հետ կազմակերպեցինք խորհրդատվական հանդիպում, որի նպատակն էր քննարկել կանանց

դերը ՀՀ անվտանգային օրակարգում: Հանդիպմանը մասնակցում էին սահմանամերձ համայնքներում կանանց հիմնահարցերով զբաղվող, «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի շուրջ ադվոկացիա իրականացնող կազմակերպություններ:

Այս բազմազան նախաձեռնությունների միջոցով ԿՌԿ-ն ցույց տվեց իր նվիրվածությունը գենդերային զգայուն մոտեցումների խթանմանը, խաղաղության կառուցման ջանքերում կանանց ակտիվ մասնակցության ապահովմանը, ինչպես նաև իր վստահությունը կոնֆլիկտային իրավիճակներից բխող բազմակողմ մարտահրավերներին դիմակայելուն:

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԿՌԿ ադվոկացիոն թիմը մասնակցել է ՀՀ գենդերային ռազմավարության և 2024-2026թթ. գործողությունների պլանի նախագծի քննարկման աշխատանքներին:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով ներկայացրել ենք առաջարկներ օրենսդրական և քաղաքականության նախագծերի շուրջ: ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի մասով մասնավորապես ներկայացրել ենք կանանց իրավունքների առավել արդյունավետ մեխանիզմներ ներդնելուն ուղղված առաջարկներ: Մանկավարժների բարեվարքության կանոնների քննարկման շրջանակներում առաջարկել ենք ներառել նաև սեռական բռնությունն ու ոտնձգությունը կանխարգելող դրույթներ: Առաջարկներ ենք ներկայացրել նաև Կամավորական աշխատանքի մասին օրենքի նախագծի, առողջապահական համապարփակ ապահովագրության համակարգի հայեցակարգի և մի շարք այլ նախագծերի վերաբերյալ:

Օգտագործել ենք քաղաքացիական հասարակությանը հասանելի հանրային կառավարման մեխանիզմները և մասնակցել ենք փոխվարչապետին կից կանանց խորհրդի, աշխատանքի և սոցիալական հարցերի, արդարադատության, առողջապահության և կրթության նախարարությունների հանրային խորհուրդների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կից կանանց խորհրդի նիստերին:

ԿՌԿ-ն անդամակցում է ոլորտում գործող երեք կոալիցիաների՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության», «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» և «Մարդու իրավունքների տուն Երևան»: Կոալիցիաների հետ համատեղ ադվոկացիան ուղղված է գենդերային բռնության դեմ պայքարին, համապարփակ հակախտրական օրենսդրության ընդունմանը և իրավապաշտպանների պաշտպանվածության բարձրացմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԴՎՈԿԱՑԻԱ

Հոկտեմբերի 4-5-ը ՄԱԿ-ի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 74-րդ նստաշրջանի ընթացքում, տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության՝ համանուն դաշնագրի շրջանակում ներկայացված 4-րդ պարբերական զեկույցի քննարկումը: Կանանց ռեսուրսային կենտրոնը Կոմիտեին ներկայացրել է այլընտրանքային զեկույց կանանց իրավունքների մասով, ինչպես նաև պետության դիտարկումից առաջ հանդես է եկել ելույթով՝ Կոմիտեի անդամներին ներկայացնելով կանանց իրավունքներին վերաբերող հրատապ խնդիրները:

Քննարկման արդյունքում Կոմիտեն ներկայացրել է Հայաստանի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումները:

ԿՌԿ-ն շարունակում է անդամակցել նաև երկու խոշոր միջազգային ցանցերին՝ սեռական և վերարտադրողական առողջության պաշտպանությանն ուղղված ԱՍՏՐԱ (ASTRA Network) ցանցին և Վեյվ (WAVE Network) եվրոպական կազմակերպությունների ցանցին, որը գենդերային բռնության դեմ պայքարում միավորում է 160 կազմակերպություններ:

Liana Sahakyan

WRC ARMENIA
Աջակցություն կանանց քաղաքացիական հասարակությանը
Support for resilient women's civil society

TAHELI
RUNNER

2.4 ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԴԻԱ

Կանանց ռեսուրսային կենտրոնի Հաղորդակցության բաժինը նպատակ ունի տեսանելի դարձնելու կազմակերպության աշխատանքը սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում (մասնավորապես՝ ԿՌԿ կայքում, Facebook, Instagram, Twitter, LinkedIn և YouTube էջերում, ինչպես նաև «Իմ մարմին՝ իմ իրավունք» նախագծի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում), խթանելու կազմակերպության նպատակներն ու տեսլականը առցանց տարածքում: Բաժնի նպատակներից է իր հաղորդակցությունը ավելի զգայուն և ներառական, ավելի ինտերսեկցիոնալ ու կազմակերպության ֆեմինիստական արժեքների վրա հիմնված դարձնելը : Այդ նպատակով սոցիալական մեդիան հնարավորություն է ընձեռում շփվելու մեր աշխատանքին հետևող, այն ընդունող կամ քննադատող մարդկանց հետ, տարածելու մեր ֆեմինիստական դիսկուրսը և առցաց քննարկումներ նախաձեռնելու:

Հունվար ամսից սկսած՝ հաղորդակցության բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Ամենամսյա հաղորդակցման պլանի ստեղծում՝ ներառյալ տարվա կարևորագույն օրերը նշելու ֆեմինիստական և սոցիալական միջոցառումների օրացույց:
- Կազմակերպության 20-ամյակին նվիրված ամենշաբաթյա հրապարակումներ ԿՌԿ արխիվից:
- Սեռական ոտնձգությունների իրազեկմանը (SAAM) նվիրված մի շարք գրառումներ, որոնք, մասնավորապես, ներկայացնում են տարվա թեման, սեռական բռնության վերաբերյալ սոցիալական հոլովակի վերահրապարակում, մեկ այլ հոլովակի վերահրապարակում՝ «Թո՛ղ բռնության բեռը» խորագրով:
- ԿՌԿ 2022թ. գործունեության հաշվետվության ամփոփում և ներկայացում ըստ բաժինների՝ «ֆեմինիստական ապահով տարածք» (մաս 1,մաս 2,մաս 3, մաս 4), «Իրականացված նախագծեր», «Ռադիո և հաղորդակցություն»:
- Հանրությանը տեղեկացնելու մի շարք հրապարակումներ ՀՀ աշխատանքային օրենսգրքում տեղ գտած նոր կարգավորման՝ «Աշխատավայրում սեռական ոտնձգությունների կանխարգելման օրենքի» մասին բացատրական տեսանյութ:
- Անգլիախոս մեր լսարանին տեղեկացնելու համար մի շարք տեղեկատվական հրապարակումներ Լեռնային Ղարաբաղի շրջափակման, պատերազմի և հումանիտար ճգնաժամի իրավիճակի վերաբերյալ:
- Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյա արշավի շրջանակներում մի շարք հրապարակումներ՝ նշելու ակտիվիզմում ԿՌԿ անցած ուղին ու պատմությունը:

Բացի վերը նշված գործողություններից կամ ձեռնարկված քայլերից՝ հաղորդակցության բաժինը պարբերաբար (գրեթե ամեն աշխատանքային օր) հրապարակել է թարմացումներ՝ կապված ԿՌԿ գործունեության, նախագծերի, միջոցառումների, դասընթացների, հայտարարությունների և այլնի վերաբերյալ:

Ներկայումս ունենք ԿՌԿ սոցիալական էջերի հետևորդների հետևյալ պատկերը.



2023 թվականի ընթացքում աճ է նկատվել նաև մեր ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի այցելությունների ինդեքսում.



«Իմ մարմին՝ իմ իրավունք» էջը շարունակել է ամենամյա տեղեկատվական արշավները տարբեր թեմաներով: Առաջինը նվիրված էր փետրվարին անցկացվող սեռական առողջության՝ շաբաթվան՝ «Փաստերո՛վ առաջնորդվեք» խորագրով, և ներառում էր գրառումներ սեռական հարաբերություններում առողջ հաղորդակցության, առողջ սեռական հարաբերությունների, սեռական հարաբերությունների տեսակների, առողջ հարաբերություններում ծնողների դերի մասին:

Ապրիլին իրականացրած հաջորդ արշավը նվիրված էր սեռական բռնությունների իրազեկման ամսին, որի խորագիրն էր «Կանխարգելումն արդարություն է պահանջում»: Գրառումները վերաբերում էին սեռական ոտնձգությունների վիճակագրությանը, տերմինների բառարանին (մաս 2 և մաս 3), տրավմա-իրազեկ աշխատավայրերին, բռնաճնշող համակարգերին և սեռական ոտնձգություններին:

«Վերարտադրողական իրավունքների շահերի պաշտպանության ցանցի» աշխատանքն ավելի տեսանելի դարձնելու նպատակով ցանցի անդամների հետ նկարահանվել են մի շարք տեսահոլովակներ: Տեսահոլովակները ներկայացնում են նրանց աշխատանքը, համագործակցությունը Ցանցում, ինչպես նաև հանրությանը տեղեկացնում են Ցանցի գործունեության մասին: Դրանք նաև ներառում են անդամ ՀԿ-ների մասին այնպիսի տեսանյութեր, ինչպիսիք են՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի մասին՝ որպես հիմնադրի, Իրական աշխարհ, իրական մարդիկ ՀԿ,Փինք իրավապաշտպան ՀԿ, Իրավունքի զարգացման կենտրոն ՀԿ և Ագաթ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ:

Նույն նպատակով հրապարակվել են մի շարք գրառումներ՝ ներկայացնելու Ցանցի անդամների կողմից կազմած բժշկական օգնություն տրամադրելու հարցում բուժաշխատողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ձեռնարկը: Գրառումները ներառել են հետևյալ թեմաները.

- սեռական բռնության ենթարկված անձանց համար բժշկական աջակցության չափորոշիչներ.
- հաշմանդամություն ունեցող կանայք.
- ՄԻԱՎ-ով ապրող կանայք.
- ԼԳԲՏ կանանց վերարտադրողական առողջության ծառայությունների մատուցում:

Քանի որ հոկտեմբերը կրծքագեղձի քաղցկեղի իրազեկման ամիսն է, մի շարք հրապարակումներ են արվել նաև այդ թեմայով՝ սկսած հիմնական տեղեկատվական գրառումից:

2023 թվականի ընթացքում ԿՌԿ Հաղորդակցության բաժինն աշխատել է կազմակերպության ռազմավարական հաղորդակցության պլանի նախագծման և իրականացման վրա՝ ապահովելով կազմակերպության տեսանելիությունը և առաջ մղելով կազմակերպության սոցիալական մեդիայի էջերը: ԿՌԿ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերն ունեցել են հետևյալ հասանելիությունը.

2.5 2023-ԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ

Այս տարի գործընկեր երեք կազմակերպությունների հետ շարունակել ենք ենթադրամաշնորհային ծրագրերը:

Տրամադրել ենք ՔՀԿ-ների ներքին կայունության հինգ նոր դրամաշնորհ և ադվոկացիոն ծրագրերի իրականացման չորս դրամաշնորհ:

Մասնակցային հիմունքով ընտրվել են կազմակերպություններ և արվել է դրանց կարիքների գնահատում: Դրա հիման վրա կազմվել է դասընթացների պլան և ընտրվել են հետևյալ 11 թեմաները.

1. ռազմավարական պլանավորում.
2. ռազմավարական հաղորդակցության սկզբունքներ.
3. հայեցակարգային քաղաքականության մշակում.
4. կառավարության/օրենսդրի հետ աշխատանք.
5 .սոցիալական ներառականություն.
6. արդյունահեն կառավարում.
7. տեղեկատվական արշավներ.
8. դոնոր համայնքի հետ աշխատանք.
9. գենդերային վերլուծություն. սկզբունքներ և գործիքակազմ.
10. ֆեմինիստական քաղաքականություն.
11. բյուջետային գործընթաց:

Այդ թեմաներով իրականացվել է 15 դասընթաց: Դասընթացներին ընդհանուր առմամբ ներկա է գտնվել 130 մասնակից, և ներգավվել է 12 դասընթացավար:

Բոլոր ենթադրամաշնորհային ծրագրերը իրականացվել և ամփոփվել են: Տրվել է նոր ենթադրամաշնորհների բաց կանչ: